



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99

—  
7-29



-6 NOV 2011

891.99

us

7-919

Մ Ք Ա Տ Ե Ր Ք Ե Ղ

բանաստեղծուքիւններ

Գ Ա Մ Ա Ռ - Բ Ա Թ Ի Պ Ա Յ Ի

1001  
3393

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՓՈՐՁ» ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԳԻՍՒ

Թ Թ Ս Լ Ի Ս

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԱՐԱՆ  
Հայաստանի Հանրապետության  
7/11-1922  
1878

49773

18.07.1878

Handwritten letters and numbers: 1878, 18, 07, 1878

Дозволено цензурою. Тифлисъ. 27 июня 1878 г.

Handwritten initials: mg

### ՎԱՆՆՅՈՑ ՀԱՅՐ ՄԵՐԸ

Հայր մեր երկնաւոր՝ սուրբ լա բու անունս,  
 Հային երկրաւոր տներ արքայութիւն,  
 Ամէն բանի մէջ բու կամբը թող՝ լա,  
 Միայն թէ Հայը լուծի տակ չի լա,  
 Ոչ չոր, ոչ կակող Հացրդ մէք կուղենք,  
 Միայն տներ ամէն Հայի ձեռքը դէնք,  
 Չենք խնդրել թողնել մեր անձանց պարտքը,  
 Թէք վերցնէր թուրքի խայտառակ Հարկը,  
 Գլորէ մեզ, Աստուած, մարտի փորձութեան,  
 Որ ազատուի ազգրդ բու Հայիկեան:

### ՎԱՆՆՅՈՑ ԱՂՕԹԻՐԸ

Տէր, ողորմեա՛ Հայոց ազգին,  
 Տուր գորութիւն մեր թոյլ բազկին,  
 Հալածէ՛ դու անգութ տաճկին,  
 Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛:

Շնորհեան մեզ մէկ քաջ զօրավար,  
Ժողուիլ Հային միազումար,  
Մարանչեցնել կրօնի համար.  
Տէր ողորմեան, Տէր ողորմեան:

Թող դադրի մեր գերութիւնը.  
Յառնէ Հայի ազգութիւնը,  
Վերջանայ մեր հեզութիւնը,  
Տէր ողորմեան, Տէր ողորմեան:

Յիշեան զմեզ, Տէր, այս անդամը,  
Ունայն չանցնի պատեհ ժամը,  
Հայքս ալ ազգաց յանք անդամը.  
Տէր ողորմեան, Տէր ողորմեան:

Տէր, թէ այժմ ալ չես ողորմիլ,  
Ալ հայիս մէկ բան չի օգնիլ,  
Մեզ կը մընայ ջուրը ընկնիլ.  
Տէր ողորմեան, Տէր ողորմեան:

Ապա՛ թըշուառ եղբայր Հայեր,  
Ձեռքերս առնունք մէմէկ սուսեր,  
Կրօշակ բանանք, փրչենք փողեր,  
Տէրըն խըղճաց ի վերայ մեր:

### ՄՇԵՑՈՒ ՀԵԿԵԿԱՆՔԸ

Վիզերըս ճրկած՝ սրբոտլ խոնարհենք,  
Տիրասէր հպատակ լինինք ու ծառայ,

Նորա անունը աղօթքով յիշենք,  
Խըղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ:

Քրտինք— վաստակի մեր տասանորդը  
Տանք նորա զօրքին, որ նա կշտանայ,  
Ըլլանք սուլթանի մրտերիմ ճորտը,  
Խըղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ:

Թող նա մեր որդոց անմեղ արիւնով  
Հաճոյքի համար սուրը լուանայ,  
Սրտերուս կսկիճն զսպենք խընամով,  
Խըղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ:

Թող պարկեշտասուն մեր աղջկներով  
Սուլթանի տրուփոտ պասքը յապենայ,  
Մեր ոսկին սերայ տանինք փէշերով,  
Խըղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ:

Յուցնունք որ Հայը չէ Տաճկին ոսոխ,  
Այլ բարեացակամ սերտ ընկեր է նա.  
Նորա գովողն է և ո՛չ չար խօսող,  
Խըղճուկ Հայ ազգիս գուցէ մեղքանայ:

Լուռ կաց, խեղճ Հայ մարդ. սընտոի յոյսեր  
Քեզ շատ խաբեցին. էլ մի հաւատալ.

Վանցնին ու կերթան շատ ու շատ դարեր,  
Հայ ազգիս վերայ թուրքը չի խըղճալ:

Ինչու կը մոռնաս փրկչի ասածը,  
«Կուռը չիբախած՝ ոչ որ չի բանալ»:

«Ո՛վ ըստացել է իւր չն հայցածր».  
Հայ ազգի վերայ Թուրքը չէ խրդձալ:

Ազատ, լայ կուզես, զիտեմ փափազող,  
Բայց դու մի յուսայ հասնիլ այդ օրին».  
Ո՛ւր է, դու զիտես, բազդբո ու փառքբո  
Ու ազատ կեանքդ: — Ի ծայր քո սուրին»...

### Վ. Ա. ՆԵՑԻ ՄՕՐ ԵՐԳԸ

Պըզտի տրղայ՝ չեմ օրօրիլ օրօրանքբո,  
Հայ աղբարբո ոտքի երան, մենակ դու կտ պիտ մընաս.  
Զարթէ, հոգիս, անուշ քունէդ, թող աչքերբո լուս տեսնին,  
Արեւելքէն արև ծագեց, բազդբո բանեց Հայ ազգին:

Զար սուլթանի ոսկի թախտար ջարդբո եցաւ, վար ինկաւ,  
Թախտի տակէն հազար ազգաց անատու թիւն ծագեցաւ.  
Ո՛վ որ շուտով ոտքի ելլէ, ազատութիւն կը գտնէ,  
Աիրուն որդիս մի թէ մենակ չար յուծի տակ պիտ՝ մըտնէ:

Մենք սուլթանին շատ խնդրեցինք կողկողալին, ու լացինք,  
Աղի աղի արտասուքով ձեռք ու ոտքը լուացինք.  
Բայց նա չանսաց պաղատանքին ողորմելի Հայերուն.  
Այժբմ՝ նայինք, նա կը լսէ շուռաչիւնը սուրերուն:

Տուր, սիրական, քակեմ ձեռքիդ պալուշները, արձակեմ,  
Ու այդ թուրիկ աջիդ մէջը մի պողպատէ սուր դընեմ.  
Ըստրուկ գընա արեան դաշտը, վերադարձիւր ազատուած.  
Արդեօք մի օր պիտի լսես մեր խնդիրքը, ո՛վ Աստուած:

### Վ. Ա. ՆԵՑԻ ԿՏՐԻՃ

Հազիւ լըրացաւ քըսան մէկ տարիս,  
Աղուամաղ քըսան երես ու ծնօտիս,  
Թըշերէս կարմիր վարդեր կը կաթիլ  
Չիլերըս ամուր՝ ասես երկաթի:  
Տըւէք ինձ սարեր՝ սարեր կործանեմ,  
Ծառը արմատով դետինէն հանեմ,

Սուր ահուաներովս երկաթ կը ծամեմ,  
Մէջըս այդքան ոյժ՝ ասէք, ի՛նչ անեմ:  
Առաջես դրէք մարդ հարիւր ու հազար—  
Զարդեմ տըրորեմ գերդ բողի ու դաղար:  
Ինչ այլք չարթու մէջ՝ այն եմ օր կանեմ:  
Մէջըս այդքան ոյժ, ասէք, ի՛նչ անեմ:

Իմ պէս բիւրերով լն է Հայաստան,  
— Նրա սուրբ հոգին ըլեմ ես զուրբան—  
Մարմինը ուժեղ լառոյդ է Հային,  
Այլ, ախոս, թըմբբած է նորա հոգին:  
Թէ մի օր զարթի նորա վեհ հոգին,  
Նա պարզ կը ցուցնէ Օսմանի ազգին—  
Ո՛վ էր երկուսէն ստրուկ և կամ տէր...  
Ա՛խ, կըք պիտ՝ թնդաք, խեղձ՝ Հայի սրտեր:

### ՎԱՆԵՑԻ ԳԵՂՋՈՒԿԻ ՏԱՂԸ

Աղօթարանը բացուեցաւ, ժամանակ է գարթելու:

Էրթամ՝ աստու, գոնուկները լըծեմ՝ դուժան վարելու:  
Դէհ, գոնուկներ, ելէք, ելէք, արտը էրթանք, աշխատինք,  
Հարկ ու խարճի վատէն մօտ է. վօթենք արուն ու քրտինք:

Հայի դուժան, Հայի դուժան, որի՞ համար կը ջանաս,  
Ո՞վ քեզիմով կը տանջուի, որի՞ն դու կուշտ հաց կուտաս:  
Այն օր, երբ քեզ ձեռքըս առի՝ ազատ օրըս կորուցի,  
Անվախ սիրտըս վըհատեցաւ, հոգիս թուրքին մատնեցի:

Բաւ է, դուժան, մեր տանջանքը, համբերութիւնն վերջ ունի.  
Դուն տեսար որ՝ մեր դուշմանը ամօթ, խեղք ու գուժ չունի:  
Արի՛ փշընմ ես քու խոփը, տանք դարբինին կըռելու,  
Կըռենք—կոփենք սուր ու սուսեր՝ դուշմանի դէմ կըռուելու:  
Եղբայր՝ Հայեր՝ առէք խոփը, տէք դարբինին կըռելու,  
Կըռել—կոփել սուր ու սուսեր՝ Հայաստանը փրկելու:

### ԲՈՂՈՒՔ ԱՌ ԵՒՐՈՊԱ

Ձեռքերըս կապած, ոտքերըս շղթայ,  
Կ'ասէ Եւրոպան «է՛ր չէլաք ոտքի,  
Ձեզ ազատութիւն, ձեզ օրէնք չի կայ,  
Տարէք, կըռեցէք դուք կեանք ըստրկի»:

Վեց հարիւր տարի մեր երակներէն  
Կաթ կաթ ծորեցաւ մեր վերջին արիւն.  
Եւրոպան կ'ասէ «Շուռ գանք Հայերէն,  
Հայի մէջ չիկայ ուժ ու քաջութիւն»:

Ամբողջ Հայաստան ասեղ չէր մնացել,  
« Հայք կ'ասեն, ինչո՞ւ թուր չի վերուցին»:  
Մի՛թէ վառօղի հոգս պէտք էր անել,  
Թէ՞ պէտք էր բրդել չոր հաց քաղցածին:

Եւրոպ՝ մոռացար երբ Ձրճադաշտը  
Ձեռքը թուր՝ կուգար շխտակ քու ծոցը.  
Բայց Հայի ահեղ Աւարայր—դաշտը  
Շիջուց մոլեռանդ այն կրօնի բոցը:

Եւրոպ՝ մոռացար այն կուռ հարուածը,  
Որ պատրաստել էր Խալամ քու որդոց.  
Հայր չուզաց քու արտօսը ու լացը,  
Քաղաքաց հրդեհ, խողտողանք մարդոց:

Երկերիւր տարի՛ արիւն թափելով  
Դէմ տուեց ահեղ, ուժգին այն գրոհին,  
Մինչև որ ձեր կեանքն դարձաւ ապահով,  
Մինչև որ ուժէն ընկաւ թշնամին.....

Եւրոպ՝ մոռացար, երբ քու քաջերը  
Անասպտոի մէջ մնացին քաղցած.



Ի՞նչ պիտ օգնէին նոցա զէնքերը,  
Թէ որ Հայք նոցա չը տային կուշտ հաց:

Ապերահատ Եւրոպ, յիշէ՛ Հայերուն,  
Գու շատ մի՛ խարուիլ սուրի շահունէ.

Արիւն վո՛թելը չէ՛ առաքինութիւն  
Եւ ո՞չ նա ազատ ողու նշան է:

Մենք խաղաղութիւն փրկէն սովոեցանք,  
Նեղելն ներել — Աւետարանէն,

Մի՛թէ մենք այսօր պատուհասեցանք,

Մի՛թէ խաբուեցանք մեր Բարերարէն:

Ինչերո՞ւս էր պէտք առաքինի վարք,

Է՛ր չեղանք Հայքըս սրիկայ, մարդասպան.

Անշուշտ կը դասէր մեղն ազգի կարգ.

Արիւնաճարաւ զոյժած Եւրոպան:

## ՉԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՅ ՅԱՆԱՊԱՏԻ

Աստուած վկայ որ՝ մենք կը յաղթէինք,

Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք.

Օրէ օր թուրքը կ'իլլէ մեր տեղէն,

Տեղըս մարդ չի մնաց զատ ծրծի տրդէն.

«Հայը զէնք չունի», կ'ասէ Օսմանլին,

Անտէր թողլէ նա մեր հայրենին.....

Աստուած վըկայ որ՝ մենք կը յաղթէինք,

Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք,

Մի՛թէ ազգային պարծանքը չարժէր—

Ամեն Հայ մէմէկ ոսկի ընծայէր,

Երկուսը՝ մէկ թուր, երեքը՝ հրացան,—

Որ մոլն ճաճ կին անէինք ցիր ցան.....

Լուկ այն, որ կուտաք խուժի ու թղթի,

Հայք, ձեզ կը հասցնէր ազգային բարդի:

Աստուած վըկայ որ՝ մենք կը յաղթէինք,

Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք:

Ո՞ր կաթողիկոս զրրեց մէկ կոնդակ,

Ո՞ր եպիսկոպոս ցրտուց հրաւիրակ,

Ո՞ր զիտնականը ձայնը բարձացրուց,

Ո՞ր զօրականը թուր ու զէնք վերցուց.

Ո՞վ Հայ ազգասէր՝ ուր ես, որ՝ ծակ ես,

Ազգային զգացմունք՝ մի՛թէ դեռ խակ ես:

Աստուած վըկայ որ՝ մենք կը յաղթէինք,

Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք:

Ա՛խ, անդարձ կ'անցնի լաւ ժամանակը,

Անիտիօխ կը մնայ մեր դատ վիճակը.

Սլավօնի ձեռքէն թափթրված շղթան

Քեզ պինդ կը կապէ, խեղճ իկ Հայաստան.....

Բայց լաւ յիշեցէք, սառնասիրտ Հայեր,

Որ փրկութիւնը ձեզնէ շատ մօտ էր.....:

Եւ ես միշտ կ'ասեմ՝ «Մենք կը յաղթէինք,  
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք:

### ՀԱՅԻ ԳԱՆԳԱՏԸ

Մեզն մոռցաւ Հայոց ազգը,  
Չի լըսիր մեր պաղատանքը,  
Տեսնել չուզէ մեր տանջանքը.  
Ապա որի՞ն մենք զանգրտինք:

Ա՛ստուած, սրտով որ բարի ես,  
Մենք վար, Գուն վեր— շատ հեռի ես,  
Այժմալ խոշոր գործերի ես.  
Ապա որի՞ն մենք զանգրտինք:

Յոյնը մեզն ապը կ'ատէ,  
Նէմցէն մեզնէ կրօնքով զատ է.  
Ֆրանկի բանը, կ'ասեն, վատ է.  
Ապա որի՞ն մենք զանգրտինք:

Թուրքին միտքը դէպի Պալքան,  
Իսպառ մոռցաւ նա Հայաստան,  
Նրբան պէտք է լուկ մեր փարան.  
Ապա որի՞ն մենք զանգրտինք:

Մեր տեղը քաջ կտրիճներ կայ,  
Պէտք որ եղաւ՝ ստակ ալ կուգայ,

Մենակ՝ ճամբայ ցուցնող չեկայ.  
Ապա որի՞ն մենք զանգրտինք:

Հայի դաշտեր, արեան դաշտեր,  
Շատ կուլ տըլիք Հայի քաջեր,  
Թէ որ ձեզնէ մէկը ելէր,  
Մեր զանգրտին վերջ կը դնէր:

### ՀԱՅԵՐՈՒՍ ԹՈՒՔԸ

Գուն խելօք, հաշուով վաճառական ես,  
Միւլք, փող ու ապրանք, կասեն, շատ ունես.  
Բայց թէ փողէդ շահ չունի Հայաստան,  
Թըքել ենք քու ալ, փողիդ ալ վըրան:

Քաջ ես, լըսել եմ. ինքդ մեծաւոր,  
Անուն յաղթողն ունիս փառաւոր.  
Բայց թէ թըքէդ շահ չունի Հայաստան,  
Թըքել ենք քու ալ, թրիդ ալ վըրան:

Ի վերուստ քանքար քեզի տուած է,  
Հեղինակ անունդ աշխարհ վըրուած է.  
Բայց թէ զրէ՛դ շահ չունի Հայաստան,  
Թըքել ենք քու ալ, զրէ՛դ ալ վըրան:

Հեռատես մըտքով դուն զարդարեցար,  
Հրօք իշխանի սիրելին դարձար.

Բայց թէ մտքէդ շահ չունի Հայաստան,  
Թրքել ենք քու ալ, մտքիդ ալ վերան:

Բանուկ ու ճարտար դուն ունիս ձեռքեր,  
Շատ կը յօրինես թանգազին բաներ,  
Բայց թէ ձեռքէդ շահ չունի Հայաստան,  
Թրքել ենք քու ալ, ձեռքիդ ալ վերան:

Երկինք շնորհեցին քեզ լեզու ճարասար,  
Քարոզչի ստացար հրուշակ ու հանձար.  
Բայց թէ լեզուէդ շահ չունի Հայաստան,  
Թրքել ենք քու ալ, լեզուիդ ալ վերան:

Մեծ ուսում առիր, եղար գիտնական,  
Գովքովդ լցուած է մարդոց բերան.  
Թէ ուսումէդ շահ չունի Հայաստան,  
Թրքել ենք քու ալ, ուսմանդ ալ վրան:

### ՂԱՐԻԲ ՄՇԵՑԻ

Ես Մըշեցի ճամբորդ եմ հեռու տեղերէն,  
Ձեզ շատ բարև բերեր եմ Հայի զեղերէն.  
Ախպէրքոս ինձ զորկեցին գէպի էս կուսման,  
(Մի վախնաք), չուզեմ ձեր մանէթն ու թուսման)  
Վարագայ Սուրբ Խաչէն բերեր եմ ձեզ լուր.  
Խըրճացէք Հայ ազգիս, տուէք մէմէկ թ ուր:


Հայ ազգը մեր տեղը նեղ օր կը քաշէ,  
Օսմանլին ու Քիւրդը կեանքերս կը մաշէ.  
Օր կըլայ՝ գերէվար կ'անէ մեր տըրոց,  
Օր կըլայ՝ արտերըս ձրգէ կրակ ու բոց.  
Թէ չօգնէք՝ մենք ալ շուտ կըլանք ցիր ու ցան.  
Խըրճացէք Հայ ազգիս, տուէք մեզ հրացան:

Սուրբ ժամերս դարձուցին անասնոց կայանք,  
Խորաններս պղծեցին, քանդեցին սուրբ վանք,  
Խաչը ոտքով վշտեցին, տեղը դբին լուսնակ.  
Խեղճ Հայը օրնիրուն ծաղը է ու ծանակ:  
Ո՛վ եղբարք, բերեր եմ ձեզ այսպէս սև բօթ,—  
Չուզենք մենք ձեր ոտիկն, տուէք մեզ վառ օր:

Այսքան շատ տանջանքին ինչպէս դիմանանք,  
Մինչև երբ ձեր դիաց անօգ պիտ' մնանք.  
Մեր ազգը տէր չունի Սլափունի նման,  
Բարի դուք ըլայիք մեզն օգնական.  
Հողիներս արորած է, ջաներս ցաւոս,  
Չուզինք մենք ձեր փարան, տուէք թն դան օթ:

Շատ տառապանք քաշեցինք դուշմանի զէնքէն,  
Շատ ալ մահ դուշմանը կերաւ մեր ձեռքէն,  
Առանց ատոր աշխարհքը մեր չէր բազմամարդ,  
Հիմի փուշ կրբքնի, ուր առաջ էր վարդ.  
Բայց մենք ձեր սուսուղի փողին կարօտ չենք,  
Հայ աղբարք, շնորհեցէք դուք մեզ մէմէկ զէնք:

Հայրս զի ոչ քան որդեաց զմեզ արարաւ զի  
Հայրս զի սրտովս զի մեզ արարաւ զի  
Հայրս զի սրտովս զի մեզ արարաւ զի  
Հայրս զի սրտովս զի մեզ արարաւ զի  
Հայրս զի սրտովս զի մեզ արարաւ զի  
Հայրս զի սրտովս զի մեզ արարաւ զի  
Հայրս զի սրտովս զի մեզ արարաւ զի  
Հայրս զի սրտովս զի մեզ արարաւ զի  
Հայրս զի սրտովս զի մեզ արարաւ զի  
Հայրս զի սրտովս զի մեզ արարաւ զի  
Հայրս զի սրտովս զի մեզ արարաւ զի




Գինն է Տաճկաստանում 1 ղուրուշ  
Ռուսաստանում 5 4.

Հայրս զի սրտովս զի մեզ արարաւ զի  
Հայրս զի սրտովս զի մեզ արարաւ զի  
Հայրս զի սրտովս զի մեզ արարաւ զի  
Հայրս զի սրտովս զի մեզ արարաւ զի  
Հայրս զի սրտովս զի մեզ արարաւ զի  
Հայրս զի սրտովս զի մեզ արարաւ զի  
Հայրս զի սրտովս զի մեզ արարաւ զի  
Հայրս զի սրտովս զի մեզ արարաւ զի  
Հայրս զի սրտովս զի մեզ արարաւ զի  
Հայրս զի սրտովս զի մեզ արարաւ զի  
Հայրս զի սրտովս զի մեզ արարաւ զի



«Ազգային գրադարան»



NL0351889

49713